Ահա սիրելիս, այս է մերկ և այլանդակ իրականութիւնը։

Ձը սիրելիս,

Քո՝

ԱՐԱՄ

ՅԳ. Նամակս նոր էի փակել, երբ ստացայ 22 Սեպտեմբեր թուակիրդ։ պատասխանը միւս անգամ։

Ա. Ե.

Փէրիա—Բոլորան 30 Սեպտեմբեր, 1918.

Սիրելի Վարդուհի,

Գիւղերի նկարագրութիւնից յետոյ՝ Դու փափագում ես, որ ծանօթացնեմ Քեզ գիւղական ընտանեկան վարք ու բարքի, նախապաշարումների և սնոտիապաշտութիւնների, զգեստի ու զարդի և տօների հետ, թէ ինչպէս են կատարում նշանադրութիւնը, հարսանիքը, թաղումը, Ծաղկազարդը, Համբարձումը և այլն։ Շատ ցաւում եմ սիրելիս, որ այդ Քո ցանկութեանը ես չեմ կարող լիապէս բաւարարութիւն տալ, որովհետև անձամբ չեմ մասնակցել այդ հանդէսներին։ Բայց քանի որ փափագում ես, կաշխատեմ Քեզ որոշ չափով բաւարարութիւն տալ։ Այդ նպատակով՝ երէկ ինձ մօտ կանչեցի գիւղի կանանցից մի քանիսին ու քահանային և ահա հեմնելով նրանց տուած տեղեկութիւնների վրայ՝ գրում եմ Քեզ առանձին-առանձին վերնագրերով։

*
* *

Փէրիա գաւառի հայաբնակ բոլոր գիւղերի նիստ ու